ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27.12.2021թ.

Քաջարան

ՕՐԱԿԱՐԳ

27.12.2021թ. ՀՀ Տավուշի մարզի խորհրդի նիստի

1.ՀՀ Տավուշի մարզի բերքահավաքի ամփոփ տվյալները/մթերումներ, աշնանացան և այլ հարցեր/

Զեկուցող՝ Վ. Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի վարիչ

2. ՀՀ Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մասին

Զեկուցող՝ Գ. Հարությունյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

3. 2020-2021թ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ամփոփում

Զեկուցող՝ Մ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Տեղեկատվություն համավարակով /COVID-19/ պայմանավորված իրավիճակի, մարզում ընթացող պատվաստումների մասին

Զեկուցող՝ Ռ. Տիգրանյան՝- ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

5. ՀՀ Տավուշի մարզի համայնքների 2021թ. տեղական բյուջեների 11 ամիսների կատարողականի մասին

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

6.Այլ հարցեր

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը:

Ներկա էին մարզի խորհրդի բոլոր անդամները:

Մասնակցում էին մարզպետի տեղակալները, գլխավոր քարտուղարը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները,

Հրավիրված էին նաև

1. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ Ս. Ավետիսյանը

2. ՀՀ Տավուշի մարզի գլխավոր դատախազ Գ. Ալոյանը

3. ՀՀ ԱԻՆ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ Վ. Փիրումյանը

1.ՀՀ Տավուշի մարզի բերքահավաքի ամփոփ տվյալները/մթերումներ, աշնանացան և այլ հարցեր/

Զեկուցող՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Զեկուցողը նշեց , որ նախորդ տարվա 1853 հա-ի դիմաց 2021-ին կատարվել է 2402 հա աշնանացան, որից 350-ը՝ պետական աջակցության ծրագրերի շրջանակներում: Ժամանակին և անկորուստ կատարվել են խաղողի բերքահավաքի և մթերման աշխատանքները: Նախորդ տարվա 560 տոննայի դիմաց 2021 թվականին վերամշակող կազմակերպությունները մթերել են 1057 տոննա պտուղ-բանջարեղեն: Գրանցվել է նաև պտղի արտահանման աճ, որը նախորդ տարվա 1550 տոննայի դիմաց ընթացիկ տարում կազմել է շուրջ 1670 տոննա:Ներկայացվե գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրները:

- Հողերի մասնատվածության բարձր մակարդակը և ոչ նպատակային օգտագործում
- Ոռոգման թույլ համակարգը և ոռոգելի հողերի ցածր տեսակարար կշիռը,
- Սահմանամերձ կարգավիճակը և անվտանգային նկատառումներից բխող գյուղատնտեսական հողերի չօգտագործման խնդիրները
- Ֆերմերների ցածր կարողություններ և գիտելիքի պակաս
- Ոլորտի մասնագետների կարիք
- Արդիական հակակարկտային համակարգերի ներդրում:

Հանձնարարվեց՝ բնակչությանն իրազեկել ՀՀ կառավարության կողմից իրականացվող գյուղատնտեսական ոլորտի ծրագրերի մասին :

2. 2021թ. սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին

Զեկուցող՝ Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

Զեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ 2021թ. Տավուշի մարզպետարան է ներկայացվել թվով 33 սուբվենցիոն հայտ, որոնք մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրվել են, բացահայտված թերությունները շտկվել և սահմանված ժամկետներում ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ, նախնական հաստատման:

Նշված բոլոր ծրագրերը միջգերատեսչական հանձնաժողովի կողմից արժանացել են հավանության որոնց մասին սահմանված կարգով տեղեկացվել է համայքներին:

Համայնքների կողմից կազմակերպվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման աշխատանքները, որից հետո հայտերի ամբողջական փաթեթները ներկայացվել են մարզպետարան:

Ընդհանուր առմամբ վերջնական ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել 16 ծրագրային հայտեր 2.87մլրդ դրամ արժեքով, որոնք բոլորը հաստատվել են միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Նշված ծրագրերից 8-ը ավարտվել են, իսկ թվով 8 ծրագրեր տարբեր պատճառներով տեղափոխվել են 2022թ:

2020 թվականից տեղափոխված 2 ծրագրեր ևս ավարտվել են: Հանձնարարվեց՝ պայմանավորված հայտեր ներկայացնելու ժամկետի փոփոխության հետ / մինչև 2022թ. հունվարի 20-ը/ հնարավոր սահմաններում , երկարացնել նոր հայտերի ներկայացման ժամկետները:

3. 2020-2021թ.ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ամփոփում

Զեկուցող՝ Մ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Զեկուցողը անդրադարձավ վերապատրաստված ուսուցիչների ատեստավորման գործընթացին: Նշվեց, որ ուսումնական տարվա առաջին կիսամյակում 15 դպրոցում իրականացվել են տնօրենների թափուր պաշտոնների մրցույթներ: Ավարտվել է դպրոցների կոլեկտիվ կառավարման խորհուրդների ձևավորման և հաստատման գործընթացը: Դպրոցներից 25-ը ունեն առանձին խորհուրդներ, 51-ը՝ միացյալ: Մարզի դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում իրականացվում է առարկայական նոր չափորոշիչներով պիլոտային ծրագիր: Մարզպետը ուշադրություն հրավիրեց դպրոցների, մասնավորապես մարզադահլիճների ու սանհանգույցների վերանորոգման վրա:
Հանձնարարվեց ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնել նոր ձևով վերապատրաստման արդյունքում աշխատավարձի բարձրացմանը:
Մարզպետը նշեց ՝ՀՀ կառավարության կողմից նախատեսված դպրոցաշինության նոր ծրագրի շրջանակներում ,, Իջևանի ավագ դպրոց,, ՊՈԱԿ-ի շենքային փոփոխության վերաբերյալ:

4. Տեղեկատվություն համավարակով /COVID-19/ պայմանավորված իրավիճակի, մարզում ընթացող պատվաստումների մասին

Զեկուցող՝ Ռ. Տիգրանյան՝- ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Զեկուցողը ներկայացրեց համավարակով պայմանավորված ,մարզում ընթացող պատվաստումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը: Հիսուն տոկոսով իրականցվել են բուժհիմնարկների կողմից սպասարկվող տարածքների մեծահասակ բնակչության պատվաստումները: Ներկայացվեց հիմնարկների կատարողականները տոկոսներով: Զեկուցողը նշեց նաև, որ բուժհիմնարկներին տրամադրվել են մոդելավորման տվյալները, և մինչև տարեվերջ իրականացվելիք աշխատանքների գրաֆիկները:
Հանձնարարվեց՝ բուժհաստատություններում , նոր թափանցող շտամի հետ կապված, սահմանել շրջօրյա աշխատանքային ռեժիմ:

5. ՀՀ Տավուշի մարզի համայնքների 2021թ. տեղական բյուջեների 11 ամիսների կատարողականի մասին

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

Զեկուցողը ներկայացրեց մարզի 24 համայնքների 2021թ. տեղական բյուջեների 11 ամիսների կատարողականը :Նշվեց, որ դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 4 միլիարդ 982 միլիոն 44,6 հազ. դրամ, որը կազմում է տարեկան նախատեսվածի 81.9 տոկոսը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 1 միլիարդ 118 մլն. 952,9 հազար դրամ կամ կատարվել է տարեկան նախատեսվածի 84,3 տոկոսը: Այնուհետև ըստ առանձին եկամտատեսակների ներկայացվեցին սեփական եկամուտների կատարողականները: Համայնքների ղեկավարներին առաջարկվեց զերծ մնալ աշխատավարձերի գծով պարտքեր առաջացնելուց, ինչպես նաև հետևողական լինել սուբվենցիոն ծրագրերի իրականացման ժամկետների և կատարվող աշխատանքների պատշաճ որակի ապահովման հարցում: Նշվեց նաև, որ մարզպետարանը պատրաստակամ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն ինչպես եկամուտների հավաքագրման, այնպես էլ տեղական բյուջեների նախագծերի կազմման գործընթացում:
Հանձնարարվեց՝ հատուկ ուշադրություն դարձնել մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների ընթացքին:

6. Այլ հարցեր

11.01.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ